

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

20 օգոստոսի 2013 թվականի N 728-Ա

### ԲԱՆԱԿՑԱՅԻՆ ԽՈՒՄԲ ՍՏԵՂԾԵԼՈՒ ԵՎ ԴՐԱ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Նախագահի 2007 թվականի հուլիսի 18-ի ՆՀ-174-Ն հրամանագրի 1-ին կետով սահմանված կարգի 121-րդ կետի 2-րդ ենթակետի պահանջներով՝

1. Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագրի երրորդ փուլի վարկային համաձայնագրի շուրջ Եվրոպական ներդրումային բանկի հետ բանակցություններ վարելու նպատակով ստեղծել բանակցային խումբ և հաստատել դրա անհատական կազմը՝ համաձայն հավելվածի:

2. Լիազորել բանակցային խմբի ղեկավար Հրանտ Բեգլարյանին ստորագրել բանակցությունների արդյունքներով կազմված արձանագրությունը:

Հայաստանի Հանրապետության  
փոխվարչապետ

Ա. Գևորգյան

2013 թ. օգոստոսի 20  
Երևան

Հավելված  
ՀՀ վարչապետի 2013 թ.  
օգոստոսի 20-ի N 728-Ա  
դրոշման

### ԱՆՀԱՏԱԿԱՆ ԿԱԶՄ

ՀՅՈՒՄԻՍ-ՀԱՐԱՎ ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ՄԻԶԱՆՑՔԻ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԾՐԱԳՐԻ ԵՐՐՈՐԴ ՓՈՒԼԻ  
ՎԱՐԿԱՅԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ՇՈՒՐՋ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԲԱՆԿԻ ՀԵՏ  
ԲԱՆԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՎԱՐԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՍՏԵՂԾՎՈՂ ԲԱՆԱԿՑԱՅԻՆ ԽՄԲԻ

- Հ. Բեգլարյան - ՀՀ տրանսպորտի և կապի նախարարի առաջին տեղակալ (բանակցային խմբի ղեկավար)
- Կ. Մինասյան - ՀՀ էկոնոմիկայի նախարարի առաջին տեղակալ
- Գ. Գրիգորյան - ՀՀ տրանսպորտի և կապի նախարարության աշխատակազմի ղեկավար
- Ա. Հովհաննիսյան - ՀՀ արդարադատության նախարարության աշխատակազմի համակարգի իրավական ապահովման վարչության պետ
- Ա. Մարության - ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի պետական պարտքի կառավարման վարչության հաշվառման և սպասարկման բաժնի պետ, վարչության պետի տեղակալ

Հայաստանի Հանրապետության  
կառավարության աշխատակազմի  
ղեկավար-նախարար

Վ. Գաբրիելյան